«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2023թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

26.06.2023թ.

10:00 Բաժնետերերի գրանցում, նյութերի և քվեաթերթիկների բաժանում

11:00 Ժողովի բացում, ողջույնի խոսք
Ելույթ – Տնօրենների Խորհրդի նախագահ

11:05 Զեկույց ժողովի քվորումի վերաբերյալ:
Զեկուցող – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ

11:10 Ժողովի օրակարգի ներկայացում
Ներկայացնող – Կորպորատիվ քարտուղար

11:15 Տարեկան հաշվետվության ներկայացում
Ելույթ - գլխավոր տնօրեն

11:30 Տարեկան արտադրա-տեխնիկական հաշվետվության ներկայացում
Ելույթ – տեխնիկական տնօրեն

11:40 Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների ներկայացում
Ելույթ – ֆինանսական տնօրեն

11:45 2022թ. ընկերության ֆինանսական գործունեության վերաբերյալ Աուդիտի եզրակացության ներկայացում

11:50 Տարեկան հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացության ներկայացում

11:55 Ընկերության 2023թ. ֆինանսական գործունեության աուդիտն իրականացնող կազմակերպության ներկայացում

12:00 «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ 2022 թվականի գործունեության արդյունքներով առաջարկվող տարեկան շահութաբաժինների համամասնությունները և տարեկան շահութաբաժինների չափի որոշման նախագծի ներկայացում
Ելույթ – Տնօրենների խորհրդի նախագահ

12:05 Ընկերության տնօրենների խորհրդի կազմի թեկնածուների ներկայացում
Ներկայացնող – Կորպորատիվ քարտուղար

12:10 Ընկերության վերստուգող հանձնաժողովի կազմի ներկայացում

12:15 Ընկերության հաշվիչ հանձնաժողովի կազմի ներկայացում

12:20 Քվեարկություն բոլոր հարցերով

12:25 Եզրափակիչ խոսք
Ելույթ – Տնօրենների Խորհրդի նախագահ

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2023թ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ
ՕՐԱԿԱՐԳ

26.06.2023թ.

1. Տարեկան հաշվետվությունների ներկայացման մասին
2. 2022թ. ընկերության ֆինանսական գործունեության վերաբերյալ Աուդիտորի եզրակացության ներկայացման մասին
3. 2022թ. տարեկան հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացության ներկայացման մասին
4. Ընկերության 2023թ. ֆինանսական գործունեության աուդիտորական կազմակերպության հաստատման մասին
5. 2022թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատման մասին
6. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ 2022 թվականի գործունեության արդյունքներով շահույթի համամասնությունների հաստատման և շահութաբաժինների վճարման որոշման ընդունման մասին
7. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ տնօրենների խորհրդի ընտրության մասին
8. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ վերստուգող հանձնաժողովի ընտրության մասին
9. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ հաշվիչ հանձնաժողովի ընտրության մասին

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2023թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ

26.06.2023թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	10 815 942	11 017 325
Ոչ նյութական ակտիվներ	-	-
Հետաձգված հարկային ակտիվներ	1 348	89 310
Մուրհակ	3 300 633	3 300 633
Տրված կանխավճարներ	118 588	957 358
	14 236 511	15 364 626
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	61 062	60 309
Շահութահարկի կանխավճար	44 009	232 490
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1 432 248	488 009
Մուրհակ	88 471	-
Ավանդներ բանկում	601 512	701 334
Դրամական միջոցներ և համարժեքներ	84 712	120 061
	2 312 014	1 602 203
Ընդամենը ակտիվներ	16 548 525	16 966 829
Սեփական կապիտալ և պարտավորություններ		
Կապիտալ և պահուստներ		
Կանոնադրական կապիտալ	11 536 861	11 536 861
Պահուստային կապիտալ	1 057 126	1 010 499
Կուտակված շահույթ	1 069 761	932 530
	13 663 748	13 479 890
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	19 196	3 384 974
	19 196	3 384 974
Ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	2 772 916	21 869
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	92 665	80 096
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն	-	-
	2 865 581	101 965
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	16 548 525	16 966 829

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2023թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ

26.06.2023թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	2 218 311	2 056 326
Ինքնարժեք	(730 375)	(653 697)
Համախառն շահույթ	1 487 936	1 402 629
Այլ եկամուտ	47 411	8 781 779
Իրացման ծախսեր	(1 293)	(886)
Վարչական ծախսեր	(335 145)	(277 014)
Այլ ծախսեր	(592 728)	(191 962)
Գործառնական գործունեությունից շահույթ	606 181	9 714 546
Այլ ֆինանսական հոդվածներ	615 959	354 529
Ֆինանսական եկամուտ/(ծախս) զուտ	(10 145)	(666 433)
Շահույթ մինչև հարկերը	1 211 985	9 402 642
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	(220 547)	(928 856)
Տարվա շահույթ	991 438	8 473 786
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	991 438	8 473 786

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության խորհրդին և ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2022թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերը ճշմարիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերվող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունի էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում.

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման աընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

30 մարտի 2023թ.
Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր-Աուդիտի ղեկավար

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Վերստուգող հանձնաժողովի եզրակացություն

Ներկայացվում է «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին
«Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք վերստուգման ենք ենթարկել «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսականան արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Համաձայն Միջազգային Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշգրիտ ներկայացման համար պատասխանատու է ընկերության ղեկավարությունը: Այդ պատասխանատվությունը ենթադրում է սխալների կամ խարդախությունների արդյունքում առաջացող էական թերություններից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար համապատասխան ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում և կիրառում:

Վերստուգող հանձնաժողովի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված վերստուգման արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Վերստուգման աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել վերստուգման ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը 2022թ. դեկտեմբերի 31-ի ավարտական տարվա համար:

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

Վերստուգող հանձնաժողովի նախագահ **Ա.Բազիկյան**

27.03.2023թ.

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

2023թ. ֆինանսական գործունեության աուդիտորական կազմակերպության հաստատում

2023թ. ապրիլի 13-ին տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ 2023 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ստեղծված մրցութային հանձնաժողովի նիստ:

Մրցույթին մասնակցելու համար ստացվել է մեկ հայտ՝ «Ֆոր էՅ Քնսալթինգ» ՓԲԸ կողմից: Մրցութային հանձնաժողովն ուսումնասիրեց հայտն և հաստատեց, որ ընկերությունը համապատասխանում է ՀՀ ԿԲ 4/09 և «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ «Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության իրականացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին» կանոնակարգերի պահանջներին:

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ տնօրենների խորհուրդը որոշեց «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր տարեկան ժողովին առաջարկել « Ֆոր էՅ Քնսալթինգ» ՓԲԸ-ն որպես 2023թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող կազմակերպություն:

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

ԱՐՏԱԿ ԲԱԼԱՅԱՆ – ծնվել է 1976թ. ք. Ստեփանակերտում: 2017թ. հունիսի 8-ից առ այսօր զբաղեցնում է «Արցախբանկ» ՓԲԸ Գործադիր տնօրեն-Վարչության նախագահի պաշտոնը: «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ խորհրդի անդամ է 2020 թվականից:

ՐԱՖՖԻ ԲԱԼՅՈԶՅԱՆ – ծնվել է 1983թ. Ֆրանսիայում, Վարկային վերլուծաբան: Հանդիսանում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ խորհրդի անդամ 2012 թվականից առ այսօր:

ՀԱՅԿ ԲՈՅԱԶՅԱՆ – ծնվել է 1979թ. Հայաստանի Հանրապետությունում: Աշխատում է ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ-ում, որպես պորտֆելի ավագ կառավարիչ: 2013 թվականից առ այսօր «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ խորհրդի անդամ է:

ԱՐԱ ՂՈՆՅԱՆ – ծնվել է 1977թ. Հայաստանի Հանրապետությունում: Զբաղեցնում է Զանգեզուրի Պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ-ի Իրավապայմանագրային Ծառայության պետի պաշտոնը: 2013 թվականից առ այսօր «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ խորհրդի անդամ է:

ՎԼԱԴԻՄԻՐ ՇԵԿՈՅԱՆ – ծնվել է 1965թ. Հայաստանի Հանրապետությունում: Գլխավորում է Միջազգային ֆինանսատնտեսագիտական և ինվեստիցիոն ծառայություններ տրամադրող ընկերությունը, որի գլխավոր գրասենյակը գտնվում է ԱՄՆ-ում և բաժանմունքները գործում են վեց երկրներում: «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ խորհրդի անդամ է 2017 թվականից առ այսօր:

ՄԵՆՈՒԱ ՄԿՐՏՉՅԱՆ – ծնվել է 1984թ. Հայաստանի Հանրապետությունում: Զբաղեցնում է Ռեսո խմբի գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնը, հանդիսանում է Ռեսո խմբի բժշկական բլոկի ֆինանսական տնօրեն: «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ խորհրդի անդամ է 2018 թվականից առ այսօր:

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ – ծնվել է 1977թ., Հայաստանի Հանրապետությունում: Հանդիսանում է «Ձի Փարթներս» իրավաբանական ընկերության հիմնադիր / գործընկեր: «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ խորհրդի անդամ առաջադրվում է 2019 թվականից առ այսօր:

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2023թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ

26.06.2023թ

2022 թվականի ֆինանսատնտեսական արդյունքներով շահույթի բաշխում

	Հազ. ՀՀ դրամ
Ընդամենը շահույթ	**991.438**
որից՝	
հատկացումներ պահուստային կապիտալին	49.572
շահաբաժիններ	807.580
չբաշխված շահույթ	134.286